1288

«ՎԱՅՏ ՍԹՈՆ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գրանցման համար՝ 271.110.1440905

ՀՎՀՀ՝ 01360223

N1/25

ՀՀ Արարատի մարզի Արարատ
համայնքի ղեկավար
պարոն Ա. Ավետիսյանին

Հարգելի պարոն Ավետիսյան

<<ՎԱՅՏ ՍԹՈՆ>> ՍՊԸ-ն նախատեսում է ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի Ավշար բնակավայրի վարչական տարածքում գտնվող ՀՀ Արարատի մարզի Արարատի տրավերտինների հանքավայրի արևմտյան տեղամասում իրականացնել օգտակար հանածոյի հանքարդյունահանման աշխատանքներ:

Նախատեսվելիք աշխատանքներն իրականացվելու են ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների համապատասխան:

Ընկերությունն իր պատրաստակամությունն է հայտնում պարբերաբար հանդիպելու համայնքի ղեկավարության հետ, քննարկելու անհրաժեշտ օգնության ծրագրերը և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքի բյուջե:

Միաժամանակ խնդրում եմ, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ /խմբագրված 2023թ/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N1325-Ն որոշմամբ սահմանված կարգի /խմբ. 28.12.2023թ թիվ 2343-Ն որոշում/ ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի Ավշար բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում կազմակերպել և իրականացնել հանրային քննարկումներ՝ հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ: Հանրային քննարկումների իրականացումից հետո ընկերությանը տրամադրել արձանագրություն, մասնակիցների ցանկ, տեսաձայնագրություն կամ նկարներ և նախնական համաձայնություն՝ ավազանու որոշմամբ, ՀՀ Արարատի մարզի Արարատի տրավերտինների հանքավայրի արևմտյան տեղամասում օգտակար հանածոյի հանքարդյունահանման աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ:

Ինչպես նաև խնդրում եմ վերը նշված Օրենքի և ՀՀ կառավարության որոշման դրույթների համաձայն ապահովել նաև շահագրգիռ հանրության մասնակցությունը:

Խնդրում եմ հանրային քննարկումների օրի, ժամի վերաբերյալ լրացուցիչ տեղեկացնել ընկերությանը:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝

«ՎԱՅՏ ՍԹՈՆ» ՍՊԸ տնօրեն Ռոման Եղիազարյան

Հասցե՝ ք. Երևան, Սիլիկյան թաղ 7փ, տուն 91

Հեռախոս՝ 055009500

E-mail: r.eghiazaryann@mail.ru